ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ի լրումն 2021թ. օգոստոսի 17-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ԳՀԱՇՁԲ-21/2-1 պայմանագրի

Ք. Երևան 22 նոյեմբերի 2021թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա մի կողմից, և

«Շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի և 466-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչպես նաև Կողմերի միջև 2021թ. օգոստոսի 17-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ԳՀԱՇՁԲ-21/2-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետի պահանջները, ստորագրեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Կողմերը՝ հաշվի առնելով հենապատի վերակառուցման աշխատանքների հստակեցված ծավալների արդյունքում առաջացած լրացուցիչ աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությունը, հանձայնեցին.

1. Կապալառուն ի լրումն Պայմանագրի պարտավորվում է կատարել հենապատի վերակառուցման լրացուցիչ աշխատանքներ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:
2. Սույն Համաձայնագրով նախատեսված աշխատանքի գինը կազմում է 1 080 000 (մեկ միլիոն ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր կիրառելի հարկերը՝ համաձայն Հավելված 1-ով սահմանված ծավալաթերթ-նախահաշվի: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:
3. Սույն Համաձայնագրով նախատեսված պայմանները տարածվում են Կողմերի միջև մինչև Համաձայնագրի ստորագրումը՝ Պայմանագրով առաջացած հարաբերությունների նկատմամբ, մասնավորապես 2021 թվականի նոյեմբերի 02-ից առաջացած հարաբերությունների նկատմամբ: Սույն Համաձայնագրով նախատեսված աշխատանքները կատարվում են և արդյունքը հանձնվում է Պատվիրատուին մինչև 2021 թվականի նոյեմբերի 22-ը:
4. Հավելված 1-ը հանդիսանում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:
5. Պայմանագրի ցանկացած դրույթ կիրառելի է սույն Համաձայնագրի նկատմամբ այնքանով, որքանով այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով:
6. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
7. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
8. Սույն Համաձայնագիրը ստորագրված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	**«Շին» ՍՊԸ**
Հ. Մովսիսյան	Ա. Խաչատրյան
Գործադիր տնօրեն	*Տնօրեն*